



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության Արարատի մարզի  
Նորաբաց համայնք Երևանյան փ. թ 32, հեռ. 6-18-55  
Էլ. փոստ norabacgyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 28 » 11 2011 թվականի N 29-Ն

ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ  
ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 18 կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով

Ավագանին որոշեց.-

Նորաբաց համայնքում 2012 թ-ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը

### Տեղական տուրքեր

1. Համայնքի տարածքում նոր շենքերի շինությունների/ ներառյալ՝ ոչհիմնական/ շինարարական /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքեր սահմանվում է .

Հիմնական օբյեկտների համար՝

1/ Մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200

քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 դրամ:

2/ Սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 դրամ:

բ. 501 –ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 դրամ:

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դր:

4/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման ու ժեղացման վերականգնման արդիականացման աշխատանքների բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ չի նախատեսվում կցակառույցների վերնակառույցների, շենքի գաբարիտային ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխութ յուն՝ 1500 դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է՝ 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/. Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական

շինությունների ներսում , վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար` 2000 դրամ:

2/ Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար` 2000 դրամ:

#### 5. Համայնքի տարածքում

1/ Բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ

2/ Հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կենտրոնում , հեղուկ վառելիքի տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150.000 դրամ:

6. Համայնքի տարածքում խաղատները, հանրային սննդի օբյեկտները , բաղնիքները գվարձանքի օբյեկտները ժամը 24.00 –ից հետո աշխատելու թույլտվության համար ընթացիկ տարվա տեղական տուրք սահմանել

1/ առևտրի օբյեկտների համար 25.000 դրամ

2/ հանրային սննդի և գվարձանքի օբյեկտների համար 75.000 դր.

3/ բաղնիքների համար 200.000 դրամ

4/ խաղատների կազմակերպման համար 500.000 դր.

5/ շահումով խաղերի կազմակերպման համար 250.000 դրամ

6/ վիճակախաղերի կազմակերպման համար 100.000 դրամ:

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

8. Համայնքի տարածքում / բացառությամբ թաղային համայնքների/ մարդատար տաքսու/ բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայության իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10.000 դրամ:

#### Տեղական վճարներ

1. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության տակ գտնվող հողերը, հատկացնելու ետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների փոխհատուցման վճար 1000 դրամ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ անցկացնելու հետ կապված ծախսերը փոխհատուցման համար մասնակիցների վճար 1000 դրամ:

Որոշման 1-ի, 2-րդ, 3-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերի համար կիրառված է 0,5 գործակիցը:



Գ. ԳԱԼՍՅԱՆ

Վարչության պետ Վ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ